ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Արթուր Համբարձումյան, Սոցիալական ծրագրերի բյուջետային գործընթացի կազմակերպման վարչության պետ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝ ք. Բրազիլիա (Բրազիլիայի Դաշնային Հանրապետություն) 2024 թվականի հոկտեմբերի 14-ից մինչև հոկտեմբերի 21-ը ներառյալ

3. Հրավիրող կողմը՝ ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի Հայաստանի գրասենյակ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝ մասնակցություն ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի կողմից կազմակերպվող «Դպրոցականների սնունդապահովման ազգային ծրագրի հարցերի քննարկում» թեմայով ճանաչողական այցին

5. Քննարկված թեմաները.

- Դպրոցական սնունդապահովման ազգային ծրագիրը Հայաստանում,
- Դպրոցական սնունդապահովման ծրագրի աշխատանքների կազմակերպումը Բրազիլիայում,
- Բրազիլիայի կրթության զարգացման ազգային հիմնադրամի գործունեությունը,
- Դպրոցական ճաշացանկի պլանավորումը,
- Դպրոցական սնունդապահովման լոգիստիկ խնդիրները,
- Դպրոցական սննդի տրամադրման գործընթացի տարբեր փուլերին առնչվող այլ հարցեր:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի կողմից կազմակերպված «Դպրոցականների սնունդապահովման ազգային ծրագրի հարցերի քննարկում» թեմայով ճանաչողական այցին հայկական պատվիրակության կազմում ընդգրկվել էին 6 նախարարություններից մեկական ներկայացուցիչներ, ինչպես նաև ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի Հայաստանի գրասենյակի և «Կայուն դպրոցական սնունդ» հիմնադրամի ներկայացուցիչներ: Բրազիլիայի համագործակցության գործակալության, Կրթության զարգացման ազգային հիմնադրամի և ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի Ընդդեմ սովի կենտրոնի ներկայացուցիչների հետ հանդիպումների ժամանակ իրենց և Հայաստանի «Կայուն դպրոցական սնունդ» հիմնադրամի կողմից ներկայացվել են շնորհանդեսներ, որոնց վերաբերյալ հարցուպատասխանի ռեժիմով իրականացվել են քննարկումներ: Փորձի ուսումնասիրման և փոխանակման նպատակով Բրազիլական կողմը կազմակերպվել է այցեր մեկական քաղաքային և գյուղական դպրոցներ, սոցիալական հանրային ճաշարան, դպրոցական սննդի կազմակերպման ասոցիացիաներից մեկը և մեկ ֆերմերային տնտեսություն, որտեղ դպրոցական սննդի կազմակերպման և ճաշացանկի վերաբերյալ իրականացվել են քննարկումներ: Հանդիպումների ընթացքում երկու երկրների ներկայացուցիչների կողմից ներկայացվել և քննարկվել են դպրոցականների սնունդապահովման գործընթացի կազմակերպման փորձն ու զարգացման հնարավորությունները:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Այցի ընթացքում որոշումների ընդունում կամ փաստաթղթի ստորագրում չի իրականացվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առկա չեն

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

24.10.2024թ.